ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18 մայիսի 2023 թ. կնքված N ՀՌՀ-ՄԱԱՊՁԲ-23/18-2 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան « » մայիսի 2023 թ.

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Վահագն Մելիք-Մարտիրոսյան Ա/Ձ-ն, ի դեմս Վահագն Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18 մայիսի 2023 թվականի կնքված «ՀՌՀ-ՄԱԱՊՁԲ-23/18-2» ծածկագրով գնման պայմանագրի՝ այսուհետ «Պայմանագիր» 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1 Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո Վաճառողի կողմից ապրանքի մատակարարման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

1.2 Կատարել Վաճառողի հաշվարկային հաշվի փոփոխություն:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 **(մեկ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	Ա/Ձ «Վահագն Մելիք-Մարտիրոսյան»
ք. Երևան, Իսահակյան 28	ք. Երևան, Թումանյան 8, 2-րդ հարկ, 217, 218, 219 սենյակ
ՀՀ ՖՆ գործառական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011035202	Հ/Հ 20500320370510001
ՀՎՀՀ 02556422	ՀՎՀՀ 21304935
L.S.	